ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի, Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի և Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի միասնական խորհրդի նիստի

(Արտահերթ հեռավար նիստը կայացել է 2025 թվականի հունիսի 18–ին):

Նիստին մասնակցում են խորհրդի ինը անդամներից ինը:

Նիստին, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում է Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի տնօրեն Ա. Սարգսյանը:

Օրակարգում՝

1. Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի փոփոխություն: /Զեկուցող՝ Ա.Սարգսյան/

Լսեցին՝ 1

(Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի փոփոխության մասին, զեկուցող Ա. Սարգսյան):

Զեկուցողը խորհրդի անդամներին ներկայացրերց հաստատության 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի փոփոխության մասին, նա նշեց, որ կապված կապիտալ դրամաշնորհի գումարի ետվերադարձի և մուտքագրման, ինչպես նաև հաստատության կրթաթոշակի և միջազգային օլիմպիադների ծախսերի հետ անհրաժեշտություն է առաջացրել փոփոխել նախահաշիվը և փոփոխած նախահաշիվը տեղադրեց խորհրդի վայբեռի հաղորդագրությունների հարթակում:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–ին կետի, 6-րդ ենթակետի և կամ 8-րդ ենթակետի պահանջներով, կառավարման խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հավանության արժանացնել տնօրեն Ա. Սարգսյանի կողմից ներկայացված Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան փոփոխած նախահաշիվը: